

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2012թ. սեպտեմբերի 28-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 22-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս. Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

Օրակարգ.

1. Գիտական կոչումների շնորհման մասին:
2. Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2012-2013 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի հաստատման մասին (զեկ.՝ խորհրդի գիտ. քարտուղար, դոց. Ս. Դավթյան):
3. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը ուսումնական և գիտագործնական գործունեության մասին (զեկ., ամբիոնի վարիչ, դոց. Վ. Քոչարյան):
4. Իրավագիտության ֆակուլտետում քննությունների և ստուգումների անցկացման կարգի մասին (զեկուցողներ՝ մեթոդխորհրդի նախագահ՝ դոց. Ա. Մարգարյան, գիտքարտուղար՝ դոց. Ս. Դավթյան):
5. Իրավագիտության ֆակուլտետի առկա և հեռակա ուսուցմամբ կուրսերում մագիստրոսական թեզերի պատրաստման վիճակի մասին (զեկ.՝ ամբիոնների վահիճներ):
6. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 2012-2013 ուս. տարվա ընդունելության արդյունքների մասին (զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Ղազինյան) :
7. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսում կատարվող ավարտական աշխատանքների մասին (զեկ.՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ.Խաչիկյան):
8. 2012-2013 ուս. տարվա համար անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության մասին (զեկ.՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ.Խաչիկյան):
9. 2011-2012 ուս տարվա երկրորդ կիսամյակի վերջին լուծարքային շրջանի արդյունքների մասին (զեկ.՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան):
10. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Գիտական կոչումների շնորհման մասին (զեկ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Ս. Դիլբանդյան):

1.1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու Աիդա Բսկոյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Աիդա Բսկոյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Տ. Դավթյանը, Վ. Քոչարյանը, Ս. Առաքելյանը, Ս.Մեղրյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

Գիտական խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու Արդա Իսկոյանին շնորհել պրոֆեսորի գիտական կոչում:

1.2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Արփինե Հովհաննիսյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ Ս.Դիլբանյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Արփինե Հովհաննիսյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Տ. Դավթյանը, Վ. Քոչարյանը, Ս. Առաքելյանը, Ս.Մեղրյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

Գիտական խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Արփինե Հովհաննիսյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

2. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2012-2013 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի հաստատման մասին (զեկ.՝ խորհրդի գիտ. քարտուղար, դոց. Տ. Դավթյան):

Զեկուցողը ներկայացրեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2012-2013 ուսումնական տարվա աշխատանքային ծրագիրը, առանձնացնելով դրանում ընդգրկված և ֆակուլտետի գործունեությանը վերաբերող առավել կարևոր հարցերն ու խնդիրները: Զեկուցողը նշեց, որ ի լրումն խորհրդի նախորդ տարիների աշխատանքային պլաններում ներառված հարցերի, 2012-2013 ուսումնական տարվա աշխատանքային պլանում ներառվել են նաև իրավաբանական կլինիկայի, կարիերայի կենտրոնի, էկոլոգիական իրավունքի կենտրոնի, ինչպես նաև եվրոպական իրավունքի կենտրոն տնօրենների հաղորդումները (հաշվետվությունները)՝ կատարված աշխատանքների վերաբերյալ: Տ. Դավթյանը նշեց նաև, որ աշխատանքային ծրագիրը վերջնականապես չի կանխորոշում խորհրդի կողմից քննարկվելիք հարցերի շրջանակը և ուսումնական տարվա ընթացքում խորհուրդը կարող է ըստ անհրաժեշտության անդրադառնալ արդիական և հրատապ հարցերի, ինչպես դա եղել է նախորդ տարիներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ա. Իսկոյանը, Ն. Այվազյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Մեղրյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2012-2013 ուսումնական տարվա աշխատանքային ծրագիրը (կցվում է):

3. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը ուսումնական և գիտաֆորմական գործունեության մասին (զեկ., ամբիոնի վարիչ, դոց. Վ. Քոչարյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Տ. Դավթյանը, Ն. Այվազյանը, Ա. Իսկոյանը, Ա. Վաղարշյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել դրական:

4. Իրավագիտության ֆակուլտետում գրավոր և բանավոր քննությունների և ստուգումների անցկացման կարգի մասին (զեկուցողներ՝ մեթոդխորհրդի նախագահ՝ դոց. Ա. Մարգարյան, գիտքարտուղար՝ դոց. Տ. Դավթյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Ն. Այվազյանը, Ս. Դիլբանդյանը, Ս. Առաքելյանը, Ա. Վաղարշյանը, Հ. Խաչիկյանը, Տ. Բարսեղյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում գրավոր և բանավոր քննությունների և ստուգումների անցկացման կարգը՝ կից հավելվածներով:

Հաստատված կարգը կցվում է:

5. Իրավագիտության ֆակուլտետի առկա և հեռակա ուսուցմամբ կուրսերում մագիստրոսական թեզերի պատրաստման վիճակի մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Տ. Դավթյանը, Տ. Բարսեղյանը, Ն. Այվազյանը, Ա. Իսկոյանը, Ա. Վաղարշյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հանձնարարել ամբիոններին առաջիկայում ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ ոչ պատշաճ վիճակում գտնվող աշխատանքների պատրաստման հետագա ընթացքի մասին:

6. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 2012-2013 ուս. տարվա ընդունելության արդյունքների մասին (զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Ղազինյան) :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Լ. Օհանյանը, Ն. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 2012-2013 ուս. տարվա ընդունելության արդյունքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

7. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսում կատարվող ավարտական աշխատանքների մասին (զեկ.՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ.Խաչիկյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Տ. Դավթյանը, Ն. Այվազյանը, Ա. Իսկոյանը, Ա. Վաղարշյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ավարտական աշխատանքներ գրելու իրավունք ստանալու համար միջին որակական գնահատականի նվազագույն շեմը՝ ըստ մասնագիտացումների:

8. ԼՍԵՑԻՆ. 2012-2013 ուս. տարվա համար անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը, իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ երաշխավորում է հետևյալ ուսանողներին.

1. Բաբայան Նարինե (մագիստրատուրա 2-րդ կուրս)՝ Գրիգոր Զոհրապի անվան կրթաթոշակ,

2. Դանիելյան Անի (մագիստրատուրա 1-ին կուրս)՝ Մխիթար Գոշի անվան կրթաթոշակ,

3. Նաղդայան Տիգրան (մագիստրատուրա 1-ին կուրս)՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի սահմանած Վ. Ներսեսյանցի անվանական կրթաթոշակ:

9. 2011-2012 ուս տարվա երկրորդ կիսամյակի վերջին լուծարքային շրջանի արդյունքների մասին (զեկ.՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Ս. Մեղրյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. 2011-2012 ուս. տարվա 2-րդ կիսամյակի վերջին լուծարքային շրջանի արդյունքների ամփոփման հարցի վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

10.1. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Տաթևիկ Ասատրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Հ. Խաչիկյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Տաթևիկ Ասատրյանի «Միջազգային որդեգրման իրավական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ.00.03 – «Քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք»,

բ/ Տաթևիկ Ասատրյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Ա. Հայկյանցին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

10.2. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը Ռուս-Հայկական /Սլավոնական/ համալսարանի իրավաբանական ֆակուլտետի քաղաքացիական և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ Շուշան Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Հ. Խաչիկյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Շուշան Սարգսյանի «Պետական գնումների իրավական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ.00.03 – «Քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք»,

բ/ Շուշան Սարգսյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Տ. Կ. Բարսեղյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

10.3. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առկա ասպիրանտ Վահագն Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Գ. Պետրոսյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Վահագն Գրիգորյանի «Վերաքննիչ դատարանի լիազորությունների հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում», բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը ԺԲ. 00.04 – «Դատարանակազմություն, Քաղաքացիական դատավարություն, Քրեական դատավարություն, Կրիմինալիստիկա, Դատական փորձաքննություն, Փաստաբանություն, Օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն»,

բ/ Վահագն Գրիգորյանի գիտական ղեկավար նշանակել ի.գ.թ., դոցենտ Ս. Մեղրյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

10.4. ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Անահիտ Մանասյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառության փոփոխման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ռ. Եղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ Անահիտ Մանասյանի ատենախոսության նախկինում հաստատած թեմայի «ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների դերը երկրում սահմանադրականության զարգացման գործում» վերտառությունը վերաձևակերպել հետևյալ կերպ. «Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական համակարգում և դրանց դերը Սահմանադրության կայունության ապահովման գործում»:

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ. Դավթյան

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2012թ. սեպտեմբերի 28-ի նիստի թիվ 2 արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Տաթևիկ Ասատրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Հ. Խաչիկյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Տաթևիկ Ասատրյանի «Միջազգային որդեգրման իրավական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավաբանական գիտություններ, շիֆրը ԺԲ.00.03 – «Քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք»,

բ/ Տաթևիկ Ասատրյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Ա. Հայկյանցին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**Խորհրդի նախագահ
Խորհրդի քարտուղար**

**Գ. Ղազինյան
Տ. Դավթյան**

**Իսկականի հետ ճիշտ է
Խորհրդի քարտուղար**

Տ. Դավթյան

ՔԱՂՎԱԾՔ

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2012թ. սեպտեմբերի 28-ի նիստի թիվ 2 արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը Ռուս-Հայկական /Սլավոնական/ համալսարանի իրավաբանական ֆակուլտետի քաղաքացիական և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ Շուշան Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Հ. Խաչիկյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Շուշան Սարգսյանի «Պետական գնումների իրավական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» վերտառությամբ ատենախոսության թեման, մասնագիտությունը՝ իրավաբանական գիտություններ, շիֆրը ԺԲ.00.03 – «Քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք»,

բ/ Շուշան Սարգսյանի գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Տ. Կ. Բարսեղյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ
Խորհրդի քարտուղար

Գ. Ղազինյան
Տ. Դավթյան

Իսկականի հետ ճիշտ է
Խորհրդի քարտուղար

Տ. Դավթյան

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2012թ. սեպտեմբերի 28-ի նիստի թիվ 2 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առկա ասպիրանտ Վահագն Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Գ. Պետրոսյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Վահագն Գրիգորյանի «Վերաքննիչ դատարանի լիազորությունների հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում», բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը ԺԲ. 00.04 – «Դատարանական գործունեություն, Քաղաքացիական դատավարություն, Քրեական դատավարություն, Կրիմինալիստիկա, Դատական փորձաքննություն, Փաստաբանություն, Օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն»,

բ/ Վահագն Գրիգորյանի գիտական ղեկավար նշանակել ի.գ.թ., դոցենտ Ս. Մեղրյանին,

զ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավափստության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ
Խորհրդի քարտուղար

Գ. Ղազինյան
Տ. Դավթյան

Իսկականի հետ ճիշտ է
Խորհրդի քարտուղար

Տ. Դավթյան

ՔԱՂՎԱԾՔ

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2012թ. սեպտեմբերի 28-ի նիստի թիվ 2 արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Անահիտ Մանասյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառության փոփոխման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ռ. Եղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ Անահիտ Մանասյանի ատենախոսության նախկինում հաստատած թեմայի «ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների դերը երկրում սահմանադրականության զարգացման գործում» վերտառությունը վերաձևակերպել հետևյալ կերպ. «Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական համակարգում և դրանց դերը Սահմանադրության կայունության ապահովման գործում»:

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ
Խորհրդի քարտուղար

Գ. Ղազինյան
Տ. Դավթյան

Իսկականի հետ ճիշտ է
Խորհրդի քարտուղար

Տ. Դավթյան

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2012թ. սեպտեմբերի 28-ի նիստի թիվ 2 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ. 2012-2013 ուս. տարվա համար անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը, իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ երաշխավորում է հետևյալ ուսանողներին.

1. Բաբայան Նարինե (մագիստրատուրա 2-րդ կուրս)՝ Գրիգոր Զոհրապի անվան կրթաթոշակ,

2. Դանիելյան Անի (մագիստրատուրա 1-ին կուրս)՝ Մխիթար Գոշի անվան կրթաթոշակ,

3. Նադդայան Տիգրան (մագիստրատուրա 1-ին կուրս)՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի սահմանած Վ. Ներսեսյանցի անվանական կրթաթոշակ:

Խորհրդի նախագահ
Խորհրդի քարտուղար

Գ. Ղազինյան
Տ. Դավթյան

Իսկականի հետ ճիշտ է
Խորհրդի քարտուղար

Տ. Դավթյան